Հրապարակվել է 25.09.2023թ.
Տեղեկատվական ամփոփագրում նշված պայմանները
գործարքի կատարման պահին կարող են փոփոխված լինել:

Մանրամասների համար խնդրում ենք դիմել՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ,
գլխամասային գրասենյակ՝ Նալբանդյան 48, ք. Երևան 0010, ՀՀ,
Հեռ.՝ +(37410) 59 20 19, +(37410) 59 20 20, +(37460) 37 25 00,
Whatsapp՝ +(37494) 44 11 88, Viber՝ +(37494) 44 11 88

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Կենսաթոշակների և սոցիալական ապահովության այլ ծրագրերով նախատեսված պարբերական դրամական վճարների սպասարկման սոցիալական հաշիվ

(ֆիզիկական անձի համար)

1. **Կենսաթոշակների և սոցիալական ապահովության այլ ծրագրերով նախատեսված պարբերական դրամական վճարների սպասարկման սոցիալական հաշիվների՝ բանկային կամ քարտային հաշվի (այսուհետ՝ Հաշիվ) ընդհանուր պայմանները.**

- Հաշվետեր՝ ռեզիդենտ, ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:
- Հաշվում եղած դրական դրամական միջոցների մնացորդի դիմաց Բանկի կողմից վճարվող տարեկան տոկոսադրույքը՝ 0%:
- Հաշվի արժույթը՝ ՀՀ դրամ:
- Հաշվի նվազագույն գումարը՝ 0 ՀՀ դրամ:
- Հաշվի համալրումը՝ միայն անկանխիկ եղանակով՝ պարբերական դրամական վճարի գումարի չափով:
- Հաշվի ժամկետ՝ անժամկետ:
- Հաշվի նվազագույն գումար՝ սահմանված չէ:
- Տոկոսների վճարման հաճախականությունը՝ ամենամսյա /տոկոսագումարները յուրաքանչյուր ամիս գումարվում են ավանդի գումարին/:
- Տոկոսների հաշվարկ՝ Բանկը տոկոսների հաշվարկն իրականացնում է հաշվում առկա ավանդի ամբողջ գումարի նկատմամբ, Հաշվի պայմանագրի ողջ ժամկետի համար՝ օրական կտրվածքով: Ընդ որում, Բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի առնվազն 1/365 հարաբերակցությամբ:
- Հաշվի բացումը, սպասարկումը, Հաշվից կանխիկ միջոցների տրամադրումն իրականացվում է համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների, որոնց կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքի՝ www.amiobank.am §Հաշվի սակագներ¦ բաժնում:
- Հաշվի քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրման, հաշվի պահպանման և այլ սակագները սահմանվում են համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների, որոնց կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքի՝ www.amiobank.am «Հաշվի սակագներ» բաժնում:
- Ծառայության վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ այցելելով Բանկի ինտերնետային կայք՝ www.amiobank.am կամ զանգահարել (+37410) 59-20-20, (+37460) 37-25-00 հեռախոսահամարներով:
- **Պարբերական դրամական վճարի գումար (ՀՀ կառավարության 12.03.20թ. 284Ն որոշման 3-րդ կետով սահմանված գումար)՝**

  ✓ «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընտանեկան նպաստը և սոցիալական նպաստը.

  ✓ «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի գումարը, վճարման ենթակա՝ չվճարված խնամքի նպաստի գումարը.

  ✓ «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ծերության նպաստի գումարը, հաշմանդամության նպաստի գումարը, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի գումարը, վճարման ենթակա՝ չվճարված նպաստի գումարը.

  ✓ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կենսաթոշակի գումարը, վճարման ենթակա՝ չվճարված կենսաթոշակի գումարը.

  ✓ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կենսաթոշակի գումարը, վճարման ենթակա՝ չվճարված կենսաթոշակի գումարը.

  ✓ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարգևավճարի գումարը, վճարման ենթակա՝ չվճարված պարգևավճարի գումարը.

  ✓ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատվովճարի գումարը, վճարման ենթակա՝ չվճարված պատվովճարի գումարը.

  ✓ աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման գումարները:

  ✓ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2169-Լ որոշմամբ սահմանված դրամական աջակցության գումարը, վճարման ենթակա՝ չվճարված դրամական աջակցության գումարը.

  ✓ «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ Ծնողական փառքի մեդալով պարգևատրված անձանց պատվովճարի գումարը, վճարման ենթակա՝ չվճարված պատվովճարի գումարը.

  ✓ Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մայիսի 19-ի N 723-Լ որոշմամբ սահմանված անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին տրամադրվող հետվճարի գումարը:

  ✓ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված Հայաստանի Հանրապետությունում գործող՝ երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրող բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատությունների (մանկատների) 18 տարին լրացած և հաստատությունից դուրսգրված շրջանավարտների դրամական աջակցության գումարը.

✓ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում գործող՝ երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրող բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատությունների (մանկատների) 18 տարին լրացած և հաստատությունից դուրսգրված շրջանավարտների բնակելի տարածության վարձակալության վարձավճարի հատուցման գումարը:

- **Շահառու (Հաշվետեր)** - անձ, ում օրենքով վճարվում է Պարբերական դրամական վճարի գումարը (ում անվամբ բացվում է Հաշիվ).
- **Կենսաթոշակառու** - «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձ, ով օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում, և նրան նշանակվել է կենսաթոշակ:

2. Առանձնահատկություններ և սահմանափակումներ.

- **Հաշվին մուտքագրվում է բացառապես պարբերական դրամական վճարի գումարը՝ սոցիալական պաշտպանության (ապահովության) ծրագրերով նախատեսված կենսաթոշակների, պարբերական բնույթ կրող (որոշակի կամ անորոշ ժամկետով տրվող) նպաստների և դրամական այլ վճարների գումարները: Հաշվով կարող է իրականացվել միայն պարբերական դրամական վճարի գումարի սպասարկման գործարքը/ները:**
- Սոցիալական ապահովության հաշիվը բացվում է Լիազոր մարմնից ստացված ցուցակների հիման վրա:
- Շահառուն Հաշիվը կարող է տնօրինել Պարբերական դրամական վճարի գումարը Լիազոր մարմնի կողմից Բանկին փոխանցելու օրվանից հետո՝ Շահառուի և Բանկի միջև Հաշվի Դիմում-պայմանագիր կնքելու օրվանից հետո:
- Հաշվին կից Բանկը տրամադրում է ARCA վճարային քարտ՝ Սոցիալական ապահովության քարտ (այսուհետ՝ Քարտ):
- Քարտի պայմանները և սակագները սահմանվում են Բանկի կողմից տվյալ տեսակի քարտերի համար հաստատված սակագներով և «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի վճարային քարտ(եր)ի թողարկման և սպասարկման համար բանկային հաշիվների բացման հիմնական (ընդհանուր) կանոններով: Բանկային հաշվի սպասարկման սակագները և պայմանները սահմանվում են Բանկի կողմից Սոցիալական հաշիվների համար սահմանված սակագներով և «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի բանկային և առարկայազուրկ մետաղական հաշիվների բացման և սպասարկման հիմնական (ընդհանուր) կանոններով, որոնց կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքի՝ www.amiobank.am «Հաշվի սակագներ» բաժնում:
- Կենսաթոշակառուն պարտավոր է ոչ ուշ, քան վերջին անգամ Բանկ ներկայանալու ամսվան հաջորդող 12-րդ ամսվա վերջին աշխատանքային օրը, անձամբ Բանկ ներկայանալու միջոցով, հավաստել Հայաստանի Հանրապետությունում լինելը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 928.9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջ) պահանջը համարվում է Կենսաթոշակառուի կողմից կատարված, եթե նա, անձամբ Բանկ ներկայանալով, հայտարարություն է ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին կամ նույնականացվել է և ստորագրել որևէ այլ փաստաթուղթ Բանկում: Կենսաթոշակառուի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելը Բանկի կողմից կարող է հաստատվել նաև առանց նրա Բանկ ներկայանալու, եթե Կենսաթոշակառուի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելը Բանկը հաստատել է՝
    - Բանկի աշխատակցի՝ Հայաստանի Հանրապետությունում Կենսաթոշակառուի գտնվելու վայր այցելությամբ.
    - իր ներքին ընթացակարգերին համապատասխան՝ տեղեկատվատեխնիկական միջոցների կիրառմամբ:

3. **Այլ պայմաններ**

- Հաշվի բացման պայմանագրի կնքման, գործառնությունների իրականացման, Հաշվի փակման համար անհրաժեշտ փաստաթղթերին կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքի՝ www.amiobank.am «ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հաշվի բացման փաստաթղթերի ցանկ» բաժնում:
- Հաշվի բացման, սպասարկման և/կամ դադարեցման ընթացքում, ելնելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության պահանջից, «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքից, «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտ»-ի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Հաշվետիրոջ՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու անհրաժեշտությունից, ինչպես նաև հաշվի առնելով այլ տարաբնույթ հանգամանքներ՝ Բանկը կարող է պահանջել Հաշվետիրոջից լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:
- Հաշիվը կարող է սպասարկվել նաև Բանկի Ինտերնետ կամ Մոբայլ բանկ համակարգերով, որոնց պայմաններին, սակագներին և կարգին կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքի՝ www.amiobank.am «Հեռահար սպասարկում» և «Հաշվի սակագներ» բաժիններում:
- Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 907 հոդվածի 1-ին կետի, Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են ավանդը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն Հաշվետիրոջը վերադարձնելու կամ Հաշվետիրոջ հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
- Հաշվետերը կարող է ցանկացած ժամանակ պահանջել Բանկից վերադարձնել Հաշվում առկա գումարը և հաշվեգրված համապատասխան տոկոսագումարները:
- Բանկը պարտավոր է Հաշվում առկա դրամական միջոցները վերադարձնել Հաշվետիրոջը նրա առաջին իսկ պահանջով:
- Հաշվետերը պարտավոր է պահպանել ՀՀ օրենքների և դրանց համապատասխան սահմանված բանկային կանոնների, Հաշվի բացման և սպասարկման մասին Բանկում գործող ընթացակարգերի պահանջները:
- Հաշվին առկա գումարը վերադարձվում է Հաշվետիրոջն այն արժույթով, որով ներդրվել է:
- Հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործարքների կատարման դեպքում արժույթի փոխարկումն իրականացվում է գործարքի կատարման պահին Բանկի կողմից սահմանված անկանխիկ փոխարժեքով:
- «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսագումարներն Հաշվետիրոջ ցանկությամբ կարող են վճարվել ՀՀ դրամով, ինչպես նաև այն արտարժույթով, որով բացվել է Հաշիվը:
- Հաշվին առկա գումարը, դրա մասը և (կամ) դրա վրա հաշվեգրված տոկոսները ստանալիս՝ Հաշվետերը Բանկ է ներկայանում անձը հաստատող կամ փոխարինող փաստաթղթով:
- Հաշվի պայմանագիրը կորցնելու դեպքում, հասցեի փոփոխության, Հաշվետիրոջը նույնացնելու համար այլ անհրաժեշտ փաստաթղթերի կորստի կամ փոփոխության դեպքում, Հաշվետերը պարտավոր է 10 (տասը) բանկային օրվա ընթացքում տեղյակ պահել Բանկին անհրաժեշտ ձևակերպումներ իրականացնելու համար, ընդ որում Հաշվետերը կրում է պատասխանատվություն հիշյալ ժամկետում Բանկին համապատասխան փոփոխությունների մասին չտեղեկացնելու հետևանքների համար:
- Պայմանագրի գործողության ընթացքում կատարված փոփոխությունները՝ պայմանագրի պայմանների, կողմերի իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ

պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող բանկի ներքին ակտերի փոփոխման դեպքում, որը հանգեցնում է տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման, Բանկը պարտավոր է գրավոր, փոստային կապի միջոցով տեղեկացնել Հաշվետրոջը՝ նոր պայմանների վերաբերյալ՝ տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ:

- Բանկն իրավունք ունի փոփոխելու Հաշվում եղած դրական դրամական միջոցների մնացորդի դիմաց վճարվող տարեկան տոկոսադրույքի չափը, եթե այլ բան նախատեսված չէ Հաշվի պայմանագրով:
- **Բանկը, հանդիսանալով Ֆիզիկական անձ- ավանդատուի հարկային գործակալ, կատարում է գանձումներ համաձայն ՀՀ և ԱՀ հարկային օրենսդրության: Ավանդներից ստացված եկամուտները ենթակա են հարկման ՀՀ տարածքում՝ ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարի 10% (տաս տոկոսի) չափով, ԱՀ տարածքում՝ 5% (հինգ տոկոսի) չափով, իսկ օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից՝ 10% (տաս տոկոսի) չափով:**

4. Հաշվետիրոջ իրավունքների պաշտպանությունը՝

- Հաշվի պայմանագրից բխող բողոք առաջանալու դեպքում, Հաշվետերը կարող է պաշտպանել իր խախտված իրավունքները դիմելով Բանկ, անհամաձայնության դեպքում՝ դիմել դատարան կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին:
- Բանկը պարտավոր է քննել Հաշվետիրոջ բողոք-պահանջը, եթե այն ներկայացվել է մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ Հաշվետերն իմացել է կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:
- Բանկը պարտավոր է 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետիրոջը տալ վերջնական պատասխան: Բանկի պատասխանը Հաշվետիրոջը չբավարարելու դեպքում, վերջինս վեց ամսվա ընթացքում կարող է դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, կամ դիմել դատարան՝ օրենքով սահմանված կարգով: Ֆինանսական համակարգի հաշտարարը իրավունք ունի քննելու այն պահանջները, որոնք ներկայացվել են Հաշվետիրոջ կողմից կազմակերպության դեմ, կապված են կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների հետ և պարունակում են 10 000 000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք այլ արժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ:
- Հաշվետերն իրավունք ունի հաղորդակցվել Բանկի հետ իր նախընտրած եղանակով՝ էլեկտրոնային եղանակով կամ փոստային կամ կապի այլ միջոցով (եթե այդպիսին նախատեսված է Բանկի կողմից): Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:
- Հաշվի քաղվածքը Բանկը, համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների, տրամադրում է Հաշվետիրոջը էլեկտրոնային եղանակով: Հաշվետերն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել քաղվածքները էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ դրանք փոստային կամ կապի այլ միջոցներով (եթե այդպիսին նախատեսված է Բանկի կողմից) ստանալու պայմանով: Ընդ որում, Հաշվետերն իրավունք ունի իր գրավոր դիմումով միակողմանի փոփոխելու հաղորդակցման միջոցը ոչ ավելի, քան տարին մեկ անգամ, և այդ փոփոխությունը կիրառվում է գրավոր դիմումը Բանկի կողմից ստանալուց 30 օր հետո իրականացվող հաղորդակցման նկատմամբ: Յուրաքանչյուր ամիս պարտադիր տրամադրվող քաղվածքները Բանկի կողմից տրամադրվում են անվճար:

5. Երաշխավորված ավանդի չափերը՝

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ տարածքում գործող բանկերում ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) բանկային ավանդների (այդ թվում Հաշվին առկա դրամական միջոցների) հատուցումը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից: Երաշխավորվում են Հաշվետիրոջ ինչպես դրամային, այնպես էլ արտարժութային Ավանդները: Օրենքով սահմանված են երաշխավորված Ավանդների հետևյալ չափերը.

- **Եթե Հաշվետերը բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է.**
- **Եթե Հաշվետերն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է.**
- **Եթե Հաշվետերն անվճարունակ բանկում ունի դրամային եւ արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասնվեց միլիոն հայկական դրամով.**

  Եթե Հաշվետերն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ եւ արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Հաշվետիրոջ՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ և Հաշվետիրոջ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ:

6. Տեղեկատվություն տոկոսադրույքների վերաբերյալ.

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY) ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը հաճախորդի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու /կապիտալացման/ արդյունքում:

7. Հայտարարություն

Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու Հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Առանց Հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

Ձեր Ֆինանսական տեղեկատուն՝ https://www.fininfo.am

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

8. **Այլ տեղեկություններ՝**
   - **Գրանցման վկայական՝** թիվ 0176, տրված 10.12.1991թ., Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 40, տրված 10.12.1991թ.
   - **Ծառայությունների ցանկը, որը Բանկն իրավունք ունի մատուցել՝** համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի Գլուխ 4-ի:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից